ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/148

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Արմեն Տոնոյանի (պետական գրանցման վկայական թիվ 278.862235),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 10.07.2020թ. թիվ 26/26-1/10338-2020 գրությամբ Ա/Ձ Արմեն Տոնոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի՝ 06.07.2020թ. թիվ 28-290 գրության հիման վրա, 10.07.2020թ. թիվ 26/26-1/10338-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Արմեն Տոնոյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Արմեն Տոնոյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Արմեն Տոնոյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/148 ընթացակարգի շրջանակներում 20.07.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը և հայտնել, որ Covid-19 վարակակիր լինելու հետևանքով մեկուսացված լինելու պայմաններում, զրկված է եղել օրենքով սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պայմանագիրը ստորագրելու և պայմանագրի ապահովումը ներկայացնելու հնարավորությունից:

3. «<u>Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.07.2020թ. թիվ 28-290 գրությամբ հայտնել է, որ իր կարիքների համար 13.05.2020թ. հայտարարված «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-20/05» ծածկագրով մրցույթի շրջանակներում գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի 03.08.2020թ. թիվ 4 որոշմամբ՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Ա/Ձ Արմեն Տոնոյանը զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով՝ Ա/Ձ Արմեն Տոնոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացրել է հիմնավորող փաստաթղթեր:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 20.07.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/148 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/148 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար ուժային տրանսֆորմատորների և գերլարման սահմանափակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արմեն Տոնոյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 02.06.2020թ. որոշում է կայացվել Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Արմեն Տոնոյանին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 03.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Արմեն Տոնոյանին 18.06.2020թ. ծանուցվել է պայմանագրի նախագիծը, որին ի պատասխան 10 աշխատանքային օրվա ընթացքում Ա/Ձ Արմեն Տոնոյանը չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

4. Նույն արձանագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, որոշում է կայացրել Ա/Ձ Արմեն Տոնոյանին պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 10.07.2020թ. թիվ 26/26-1/10338-2020 գրությունը, Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի՝ 06.07.2020թ. թիվ 28-290 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ

հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման</u>***

<u>ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:</u>

Այսպես, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար ուժային տրանսֆորմատորների և գերլարման սահմանափակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արմեն Տոնոյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 02.06.2020թ. որոշում է կայացվել Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Արմեն Տոնոյանին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ա/Ձ Արմեն Տոնոյանին 18.06.2020թ. ծանուցվել է պայմանագրի նախագիծը և տեղեկացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում պայմանագիրը ստորագրելու, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 03.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Արմեն Տոնոյանին 18.06.2020թ. ծանուցվել է պայմանագրի նախագիծը, որին ի պատասխան 10 աշխատանքային օրվա ընթացքում Ա/Ձ Արմեն Տոնոյանը չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Նույն արձանագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, որոշում է կայացրել Ա/Ձ Արմեն Տոնոյանին պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ ենթակետերի համաձայն՝

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում՝ պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի

էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u>***

Ընդ որում՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսպիսով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է հստակ ժամկետ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից սույն Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ, գտնում եմ, որ Ա/Ձ Արմեն Տոնոյանը հրաժարվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-20/05» ծածկագրով պայմանագիրը կնքելուց և թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը, որի հետևանքով զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է ՍՑ-ՆԳ-2020/148 ընթացակարգի քննության նպատակով 20.07.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի շրջանակներում Ա/Ձ Արմեն Տոնոյանի կողմից արված այն հայտարարությանը, որ Covid-19 վարակակիր լինելու հետևանքով մեկուսացված լինելու պայմաններում, զրկված է եղել օրենքով սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պայմանագիրը ստորագրելու և պայմանագրի ապահովումը ներկայացնելու հնարավորությունից, հարկ եմ համարում նշել հետևյալը.

Նիստի ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից պահանջվեց ներկայացնել, որևէ փաստաթուղթ, որը կհիմնավորեր Ա/Ձ Արմեն Տոնոյանի Covid-19 վարակակիր լինելու փաստը, սակայն վերջինս ի պատասխան նշված պահանջի 20.07.2020թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ նաև, որ Ձեր պահանջած հիվանդանոցային փաստաթուղթը այս պահին չտրամադրեցին՝ հիվանդանոցի գեր-ծանրաբեռնված լինելու պատճառով, իսկ իմ մոտ եղած թեսթերի՝ թե դրական և թե բացասական պատասխանները և հագուստից սկսված ամեն բան ինչ կապ ունի հիվանդանոցի հետ՝ բժշկի ցուցումով ոչնչացվել է:

Հիվանդանոցում խոստացել են հարմար պահին ուղարկել տեղեկանքը՝ որը անհապաղ կտրամադրեմ Ձեզ: Աշխարհին պատուհասած անկանխատեսելի, անհաղթահարելի համավրակի կապակցությամբ խնդրում եմ ներողամիտ գտնվեք այս մրցույթի ոչ պատշաճ ընթացքի համար և չզրկեք մեր նորաստեղծ ընկերությանը այս առողջական և տնտեսական ճգնաժամի ժամանակ»:

Այնուհետև, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 28.07.2020թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/11264-2020 գրությամբ Ա/Ձ Արմեն Տոնոյանին հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում գտնվող ՍՑ-ՆԳ-2020/148 ծածկագրով գործի քննության նպատակով 20.07.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի ընթացքում հայտարարեցիք, որ Ա/Ձ Արմեն Տոնոյանի կողմից սահմանված ժամկետում պայմանագիրը ստորագրելու և պայմանագրի ապահովումը ներկայացնելու համար խոչընդոտ է հանդիսացել COVID-19-ով Ձեր վարակված լինելու հանգամանքը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 20.07.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի ընթացքում պահանջվեց ներկայացնել COVID-19-ով Ձեր վարակված լինելու փաստը հավաստող որևէ ապացույց, որը Ձեր կողմից չի ներկայացվել:

Ուստի՝ ևս մեկ անգամ հայտնում եմ, որ անհրաժեշտ է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնել վերը նշված ապացույցը, հակառակ դեպքում ներկայացնել ապացույց առ այն, որ Դուք գրավոր դիմել եք ՀՀ առողջապահության նախարարություն՝ համապատասխան տեղեկանք ստանալու նպատակով, սակայն, ինչպես նշել եք Ձեր գրավոր դիրքորոշման մեջ, գերծանրաբեռնվածության պատճառով նշված փաստաթուղթը Ձեզ չի տրամադրվել»:

Սակայն, վերը շարադրված գրությանն ի պատասխան, Ա/Ձ Արմեն Տոնոյանի կողմից ոչինչ չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 10.07.2020թ. թիվ 26/26-1/10338-2020 գրությամբ Ա/Ձ Արմեն Տոնոյանին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Արմեն Տոնոյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**